
**ԱՆԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ**

ԽԱՌԱՏՅԱՆ Լ. Ա.

Ինչպիսի օրենսդրությանը պետք է առնչվեն ՁԼ միջոցները ժողովրդավարական հասարակարգում, ինչն է գերակայում անցումային հասարակարգում՝ օրենքը, թե իրավունքը: Ամենից առաջ պետք է պատասխանել այն հարցին, թե ինչ է իրավունքի գերակայության սկզբունքը¹ և որքանով է այն առնչվում ՁԼՄ գործունեության հետ:

Հայտնի է, որ օրենքը կարող է դիտվել որպես անսանձ պետական իշխանության գործիք, կամ մեխանիզմ, որի միջոցով պետությունն իրականացնում է իր իշխանությունը լեգիտիմ նպատակների իրականացման համար: Իրավունքի գերակայության սկզբունքի միջոցով պետությունը նախևառաջ կիրառում է իր իշխանության ուժը, ընդհուպ մինչև հարկադրանքի միջոցներ, այն է՝ հարկադիր իշխանությունը, սակայն, լինելով ժողովրդավարական հասարակարգի բաղկացուցիչ մաս, իրավունքի գերակայության սկզբունքը հաստատում է պետական իշխանության զսպիչ նախադրյալներ, որոնք պարտավորեցնում են պետությանը հետևել հանրորեն հրապարակված նորմերին: Այս հարցին պարզաբանումներ տալու նպատակով ԵԱՀԿ-ն ղեկավարվում է հետևյալ պահանջներով.

1. Կառավարությունը, որպես գործադիր իշխանության մարմին, պարտավոր է գործել համաձայն Սահմանադրության և պետության օրենքների համապատասխան:

2. Օրենսդրական ակտերը քննարկվում և ընդունվում են պարզ ընթացակարգի միջոցով:

3. Պետության զինված ուժերը և ոստիկանությունը հաշվետու են իշխանության համապատասխան մարմիններին:

4. Վարչական հրահանգները պարտադիր պետք է հրապարակվեն, առանց որի, դրանք օժտված չեն լինի իրավաբանական ուժով:

5. Ժողովրդավարական հասարակարգում պետք է լինեն վարչական որոշումների բողոքարկման արդյունավետ միջոցներ. ա) տեղեկատվության տրամադրումը այն անձին, որի վրա տարածվում են դրա հետևանքները, բ) անկախ դատական իշխանություն, գ) իրավաբանների անկախության պաշտպանություն, դ) քրեական դատավարության ոլորտում ձևավորված հաստատուն երաշխիքներ:

Դրա հետ մեկտեղ, ԵԱՀԿ-ն ամրագրում է, որ իրավունքի գերակայության սկզբունքը օժտված է ոչ միայն փաստացի օրինականու-

¹ *Stéu Neil Kritz, The Rule of Law in the Postconflict Phase: Building a Stable Peace, in Managing Global Chaos: Sources of and Responses to International Conflict 587, 588 (Chester A. Crocker et. al. eds., 1996); Fallon R. H., The "Rule of Law" as a Concept in Constitutional Discourse, 97 Columbia Law Review (1997) John Reitz, Constitutionalism and the Rule of Law: Theoretical Perspectives, in Democratic Theory and Post-Communist Chance 111 (Robert D. Grey ed., 1997) և այլն:*

թյան տարրերով, այլև ապահովում է ժողովրդավարական հասարակարգի և դրա նպատակներին հասնելու՝ զարգացման հաջորդականությունն ու պարբերականությունը: Իրավունքի գերակայության սկզբունք հասկացությունում նկատվում է նաև արդարադատության տարրը, որը հիմնված է մարդու անհատականացման գերագույն արժեքների ճանաչման և ըմբռնման վրա: Միևնույն ժամանակ իրավունքի գերակայության սկզբունքը պարունակում է այնպիսի նախադրյալներ, որոնք հանդես են գալիս որպես բարենպաստ միջավայրի բաղկացուցիչ մասեր՝ արդյունավետ և ազատ ՁԼՄ զարգացման և իրագործման համար: Ժողովրդավարական հասարակարգին բնորոշ է կայուն իրավական համակարգը, որն էլ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, իր նպատակն է համարում հասարակարգում հաստատել կանխատեսելիությունն ու հիմնավոր արդարություն: Պետք է նշել նաև իրավական համակարգին բնորոշ իրավանորմերը, մասնավորապես, այդ նորմերին զուգահեռ գործող վարչական ընթացակարգային իրավանորմերը, անկողմնակալությունն ու օբյեկտիվությունը, և, վերջապես, դատական պաշտպանությունը: Պետությունը ի դեմս օրենսդիր իշխանության մարմնի, ընդունում և հաստատում է այնպիսի իրավանորմեր, որոնք համապատասխանում են ընդունված ժողովրդավարական ընթացակարգին և հայտնի են քաղաքացիներին: Շատ կարևոր է, որ բարենպաստ միջավայրին հասանելի և պարզ լինեն ընդհանուր նորմատիվ ակտերը, որոնք կոչված են կարգավորելու ինչպես ֆիզիկական (մասնավոր) անձանց, այնպես էլ պետական իշխանության մարմինների վարքագիծը: Դրանք պետք է հրապարակվեն հաստատված կարգով և հասանելի լինեն քաղաքացիներին: Ինչ վերաբերում է հիմնական պահանջներից ամենակարևորին, ապա պետական մարմիններին, որոնք լիազորված են հրապարակելու իրավական ուժ ունեցող ակտերը, այդ լիազորությունները պետք է վերապահվեն հստակորեն հաստատված ընթացակարգով: Երկրորդ, միայն հրապարակված դրույթները կարող են կիրառվել վարչական մարմինների միջոցով: Իրավական համակարգերում, որոնք չեն հետևում իրավունքի գերակայության սկզբունքին, պետական իշխանության մարմինները կարող են կիրառել ոչ հստակ իրավական նորմեր, որոնք հայտնի են միայն իրենց, և, հետևաբար, կանխատեսելիության և արդարության մասին խոսք լինել չի կարող, որոնք անհրաժեշտ են անկախ ՁԼՄ զարգացման համար: Կարելի է վստահ ասել, որ համապատասխան իրավասություններով օժտված պետական մարմինները պետք է լինեն հետևողական և մասնագիտացված, ինչպես նաև ունակ՝ իրավական նորմերի մշակմանը և ճիշտ կիրառմանը մասնակցելու գործընթացում: Լուրջ ուշադրություն են պահանջում նորմաստեղծման գործընթացում մասնագետների ուսուցման և որակավորման հարցերը: Ազդո՞ւմ է արդյոք իրավունքի գերակայության սկզբունքը ՁԼՄ զարգացման վրա. այդ պարզելու համար պետք է պատասխանել մի քանի առանցքային հարցերի: Նախ, որքանով են պարզ և հասանելի գոյություն ունեցող նորմերը: Եվ ապա, որքանով են դրանք պաշտպանված օրենքով, այնուհետև՝ դատական պրակտիկայով: Այս հար-

ցերը օրգանապես կապված են իշխանությունների տարանջատման սկզբունք հասկացության հետ, որի համաձայն, պետական գործառույթները պետք է բաժանված լինեն իշխանության օրենսդիր ճյուղի (որը ստեղծում է իրավական նորմեր), գործադիր (վարչական) ճյուղի (որն ի կատար է ածում օրենքները) և դատական ճյուղի (մեկնաբանում և կիրառում է օրենքները):

Իրավունքի գերակայության սկզբունքի հիմնական դրույթներից մեկը կայանում է նրանում, որ օրենսդիր մարմինը չի կարող միաժամանակ լինել գործադիր մարմին, քանի որ նման իրավիճակում մտավախություն կառաջանա, որ օրենք կիրառելիս այն չի կարող անկողմնակալ լինել: Հետևաբար, օրենսդիր մարմինն չի կարելի թույլատրել մասնակցել օրենքների գործադրմանը: Միննույն ժամանակ, օրենքները պարտավորություններ են դնում գործադիր իշխանության ճյուղի վրա: Դրանք պետք է կիրառվեն այն մարմինների նկատմամբ, որոնք միաժամանակ չեն կարող գործել այլ կերպ, քան իրենց իրավասություններին համապատասխան և, որոնք ամրագրված են օրենսդիր իշխանությամբ: Երկու դեպքերում էլ, այդ սկզբունքների ապահովման համար պահանջվում է հսկողություն, որն իրականացվում է համապատասխան լիազորություններով օժտված անկախ դատական մարմնի կողմից և որն էլ հանդիսանում է իշխանության երրորդ ճյուղը:

Իրավունքի գերակայության սկզբունքը վերլուծելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել օրենքի լեզվին, որին բնորոշ են գնահատման հետևյալ չափանիշները. 1. պարզություն և հստակություն, 2. տարածման միջոցներ, 3. հասանելիություն:

Եթե օրենքները հստակ չեն, խճճված են կամ հակասական, ապա ՁԼՄ անկախության փոխարեն կավելանա չարաշահումների հավանականությունը և դրանով իսկ կխաթարվի դրանց անկախությունն ու ազատ զարգացումը: ԱՄՆ-ում պարզության և հստակության մտահղացումը ամրագրված է այն դրույթում, որն ազդարարում է. «օրենքը գրկվում է իրավաբանական ուժից՝ իր առաձգականության դեպքում»: Պարզությունը, որը վերաբերում է խոսքի ազատությանը, համարվում է օրենքի ճիշտ հղման էական փաստ: Եթե օրենքը մեկնաբանվի չափազանց լայն, ապա խոսքի ազատության համար կառաջացնի հատուկ խնդիրներ:

Էական նշանակություն ունեն օրենքի հասանելիությունը և ժողովրդավարական բնույթը: Սա նշանակում է, որ իրավանորմերը, որոնք հայտնի չեն հասարակությանը, ըստ էության, չեն կարող համարվել իրավանորմեր: Դրանք ուղղակի լծակներ են, միջոցներ, որոնցով պետական իշխանությունները կարող են գործել ըստ իրենց հայեցողության: Օրենսդրական նախագծերը կամ վարչական ակտերի նախագծերը պետք է հրապարակված լինեն, որն անհրաժեշտ է, որպեսզի շահագրգիռ քաղաքացիները, ինչպես և ՁԼՄ-ը հնարավորություն ունենան արտահայտելու իրենց դիտողությունները: Քանի որ դատական մեկնաբանումը դառնում է հենց օրենքի մի մասը, ապա այն սկզբունքները, որոնք կիրառվում են օրենքի հրապարակման ժամանակ, պետք է կիրառվեն նաև դատական որոշումների

հրապարակման առիթով: Մինչդեռ այն հասարակարգերում, որտեղ մամուլի իրավական կարգավորման դաշտը բավարար չափով զարգացած չէ, օրենքների մեկնաբանման և հրապարակման խնդիրները կարող են թվալ ոչ այնքան նշանակալի և կարևոր: Օրենքի մեկնաբանման խնդիրները լուծելիս հարկավոր է իրավական նորմերի առկայություն հետևյալ համակցությամբ՝ զանգվածային հաղորդակցության միջոցների գործունեություն, ՁԼՄ գրանցման ընթացակարգը, ՁԼՄ կողմից քաղաքական կազմակերպությունների լուսաբանում, գրապարտանքի համար սահմանված պատասխանատվության իրականացում, պետական գաղտնիքի հրապարակման կամ այլ պահանջների խախտումների համար սահմանված պատասխանատվություն: ՀՀ-ում գործող օրենսդրությունը, մասնավորապես «Զանգվածային լրատվության մասին» օրենքը նախատեսում է լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումներ: Համաձայն օրենքի հոդված 7-ի, «արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»²:

Պետական մարմինների կողմից ընդունված վարչական ակտերը հիմնված են իրավական բազայի վրա: Պետական մարմնի պարտականությունն է աշխատել օրինականության հիմնական սկզբունքով: Անկախ ՁԼՄ գործունեության ճիշտ իրականացման առջև լուրջ խոչընդոտ կարող են լինել այն իրավական նորմերը, որոնք բխում են ոչ թե օրենքներից, այլ այնպիսի վարչական ակտերից, որոնց միջոցով ինքնին կիրառվում և մեկնաբանվում է օրենքը: Որպեսզի վարչական համակարգը ճիշտ գործառի, անհրաժեշտ է հստակ տարանջատել առանձին մարմինների պարտականությունները: Օրինակ՝ նախկին ԽՍՀՄ-ում հեռարձակման ընկերությունը գործունեության իրականացման համար պետք է ստանար հեռարձակման արտոնագիր, ինչպես նաև թույլտվություն կառավարությունից՝ իրեն հատկացված հաճախականությունից օգտվելու համար: Այստեղ ակնհայտ է պետական մարմնի կողմից կամայական միջամտությունը և հեռարձակման ընկերությունների իրավունքների անգիտացումը:

Հայտնի է, որ ամեն մի հեռուստահեռարձակման ընկերություն ոչ միայն լրատվամիջոց է, այլ նաև առևտրային կազմակերպություն՝ իրավաբանական անձ, որն ունի իր կազմակերպարարական ձևին համապատասխան կանոնադրություն և կանոնադրական կապիտալ: Հետևաբար, այն միջավայրում, որտեղ հնարավոր չէ իրականացնել առևտրային գործունեություն, հեռուստահեռարձակողը չի կարող գործառել: Առևտրային գործունեությունը կարգավորող գրեթե բոլոր նորմերը պետք է գործեն հնարավորինս անկաշկանդ: Օրինակ, եթե օտարերկրյա բանկում հաշվեհամար բացելու համար պահանջվում է հատուկ թույլտվություն, այն պետք է հիմնված լի-

² Տե՛ս ՀՀ օրենքը *Զանգվածային լրատվության մասին, ընդ. 2003 թ. դեկտեմբերի 13-ին, էջ 3:*

նի պարզ և իրար չհակասող չափանիշների վրա: Հուսալի և կայուն իրավական նորմերը հիմք են հանդիսանում հեռարձակման ընկերության գործունեության և մամուլի անկախ ու ազատ զարգացման համար: Նպատակ ունենալով զարգացնել իրենց գործունեությունը, այդ ընկերությունները չեն կարող անտեսել այն օրենքները, որոնք վերաբերում են վարչական համակարգին, ինչպես նաև միջոցների ներդրման խնդիրներին:

Անհրաժեշտ է վարչական ընթացակարգի առկայությունը արդարության սկզբունքի հիման վրա՝ գուգորդված անկողմնակալության և օբյեկտիվության չափանիշներով: Իրավունքի գերակայության սկզբունքը նախ ներառում է կառավարության բոլոր որոշումները: Այստեղից ենթադրվում է, որ այս որոշումների հիմքում առկա է որոշումներ ընդունելու հնարավորություն՝ ըստ կառավարության մարմինների հայեցողության: Նշված մարմինների իրավասության այս ազատությունը, միանշանակ պետք է սահմանափակել, և այդ սահմանափակումը պետք է հիմնվի արդարության հիմնական սկզբունքի վրա: Ժողովրդավարական, իրավական պետություններում ՁԼՄ արտոնագրային ընթացակարգը պարզ է, օբյեկտիվ և անկողմնակալ, համաձայն որի, իշխանությունները պետք է գործեն հաստատված ընթացակարգային նորմերին և չափանիշներին համապատասխան, որոնք կիրառվում են բոլոր մասնակիցների նկատմամբ անկողմնակալության սկզբունքով: Այսպես, եթե երկու թեկնածուներ դիմում են հեռուստահեռարձակման ընկերություն՝ միննույն արտոնագիրը ստանալու թույլտվությամբ, ապա որոշում ընդունող մարմինը պարտավոր է այդ երկուսի հանդեպ անկողմնակալ կիրառել պարզ և հստակ սահմանված նորմերը: Ընդ որում, երկու թեկնածուներն էլ պետք է հնարավորություն ունենան ազատ արտահայտելու իրենց կարծիքը և բերել փաստարկներ:

Դատական պաշտպանություն և հսկողություն է իրականացնում իշխանությունների երրորդ ճյուղը: Փորձենք այդ պարզել՝ վերլուծելով դատական իշխանության դերը իրավունքի գերակայության սկզբունքի համատեքստում: Դատական համակարգը ՁԼՄ ոլորտում նույնպես իրականացնում է օրենքների իմաստի բացահայտում և օրենքների մեկնաբանում: Հարցը կայանում է հետևյալում՝ արդյոք հասարակարգում գոյություն ունի այնպիսի մի մարմին, որին կարող է դիմել տուժող կողմը, հատկապես այն ակտերի վերանայման նպատակով, որոնք ընդունված են իշխանության մեկ այլ ճյուղի կողմից: Իհարկե, բավարար չէ ունենալ այնպիսի դատական համակարգ, որը կարող է դիտվել որպես պետական վարչական կառույցի հավելված, հատկապես եթե այն օժտված չէ համապատասխան իրավասություններով՝ լիիրավ իրականացնելու հսկողության գործառնություն: Դատավորները պետք է կարողանան և պատրաստ լինեն ընդունել որոշումներ ընդդեմ պետական մարմինների, եթե վերջիններս թույլ են տվել խախտումներ և սխալներ՝ իրենց իրավասությանը վերապահված գործառնություններում: Նման իրավիճակներում դատավորները չպետք է «վախենան» կորցնելու իրենց դիրքը, հակառակ դեպքում նրանք չեն կարող անկողմնակալ կատարել իրենց

պարտականությունները: Բացի այդ, ժողովուրդը պետք է վստահություն ունենա, որ դատարանները գործում են անկողմնակալության և արդարության սկզբունքի հիման վրա: Դատական համակարգի մասին կարելի է դատել՝ ելնելով անկախության և օբյեկտիվության սկզբունքներից: Կան անցումային հասարակարգեր, որտեղ դատական համակարգը տուժում է նրանից, որ դատավորները վարձատրվում են համեմատաբար ցածր աշխատավարձով, թեև այդ ոչ միշտ է համոզիչ գործոն դատավորների անկողմնակալությունն ապահովելու համար: Դատական համակարգի արդյունավետության մասին կարելի է խոսել նաև ելնելով այն հանգամանքից, թե որքանով են գործունակ իր կողմից ընդունված որոշումները՝ կառավարական այս կամ այն հրահանգի վերանայման դեպքում:

Լրատվություն ստանալու և տարածելու ՁԼՄ իրավունքը՝ վերը նշված հայտնի սահմանափակումներով հանդերձ, չի խաթարում այն ճշմարտությունը, որ առանց ազատ մամուլի՝ ժողովրդավարություն հնարավոր չէ: ՁԼՄ կարևորագույն խնդիրն է հանրությանը տեղեկացնել այն ամենի մասին, ինչը հետաքրքրում է կամ կարող է հետաքրքրել հասարակությանը կամ նրա մի մասին: Բացի դրանից, ՁԼՄ իրականացնում է հստակ գաղափարական և քաղաքական գործառույթներ: Դրանով է բացատրվում դրա կապը քաղաքական համակարգի, առաջին հերթին, պետության և քաղաքական կուսակցությունների հետ: Հետևաբար, ազատ և անկախ ՁԼՄ-ն կենսականորեն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակարգում: Ժողովրդավարական երկրներում, ըստ հասարակական կարծիքի և ավանդույթային մակարդակների զարգացման չափերի, ՁԼՄ գործառույթը կարող է ընթանալ տարբեր ձևերով, իսկ ազատությունն ու անկախությունը կարող են ունենալ տարբեր աստիճանակարգումներ: Պետք է հստակեցնել՝ ինչպիսին պետք է լինի մամուլը, և ինչպիսին՝ հասարակությունը, որպեսզի ժողովրդավարական ինստիտուտների կառուցումը ընթանա օրինաչափ:

Նորագույն տեխնոլոգիաների ի հայտ գալու, հատկապես ինտերնետի, ինչպես նաև լրատվության աճին զուգահեռ, ավանդական ՁԼՄ-ն կարող է ձեռք բերել լրացուցիչ գործառույթներ արդեն իսկ գոյություն ունեցող լրատվամիջոցների գործունեության շրջանակներում, սակայն դրանով ՁԼՄ հիմնական գործառույթները փոփոխվել կամ փոխարինվել չեն կարող: Անցումը դեպի զարգացած ժողովրդավարություն ենթադրում է պետական իշխանության մենաշնորհի մասնատում կամ ոչնչացում, այդ թվում նաև լրատվության մենաշնորհի վերացում: Շատ դեպքերում ՁԼՄ բարեփոխումներն ուղղված են կարծիքների անկաշկանդ արտահայտմանը, որ նախկինում գոյություն չուներ «գաղափարների հասարակական շուկայում»: Ստեղծելով ազատ, անկախ ՁԼՄ՝ անցումային շրջանի հենց սկզբում, կարելի է վստահ ասել, որ ժողովրդավարական ինստիտուտները կանգնած են ամուր հիմքի վրա: Ձևավորված ժողովրդավարական համակարգում ազատ, անկախ լրատվամիջոցները երբեմն կազմավորվում են լիովին բնականոն և անցավագին, բայց կան անցումային հասարակարգեր, որոնցում այդ ընթացքի

զարգացման

և

պահպանման համար անհրաժեշտ են այլ, առավել արհեստական միջոցներ: Վերջապես, եթե հասարակությունում գործառում են անկախ լրատվամիջոցները, որոնք ընդունակ են ստեղծել և ձևավորել հասարակական կարծիք, այս դեպքում ժողովրդավարական ինստիտուտների կառուցումն ընթանում է առավել արագ և հասարակության կողմից առավել պաշտպանվածությամբ:

Քաղաքացիական հասարակության զարգացման համար պետք են օրենքներ, որոնք անկախ ՁԼՄ համար ստեղծում են կառուցվածքային իրավական հիմք: Սակայն օրենքներն ինքնին չեն սահմանում, թե ինչպես պետք է գործառեն լրատվամիջոցները: Որպեսզի ազատ, անկախ ՁԼ-միջոցներն «աշխատեն», տվյալ հասարակարգը պետք է գնահատի այն դերը, որը վերապահված է նրանց: Քաղաքական ազատամտության տեսությունը և ազատամիտ քաղաքականության պատմությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակությունում իրավունքի գերակայությունը սկզբնական արդյունք է, որը նախորդում է օրենսդրական բարեփոխումներին: Կարևոր խնդիր է հասարակության մեջ գոյություն ունեցող ավանդական տեսակետների փոփոխությունների անհրաժեշտության գիտակցումը, որպեսզի հնարավոր լինի խուսափել մենաշնորհից կամ օլիգարխիայից: Երկրորդ, ոչ պակաս կարևոր խնդիրն է՝ ըմբռնել այն, թե ինչպիսի միջոցներով կամ գործողություններով կարելի է հասնել վերը նշված խնդրին, և ինչպիսի նոր տեսակետների պետք է տալ նախապատվություն: Այսպես, Ռուսոնդայում 90-ական թթ. սկզբներին ՁԼՄ ապամենաշնորհմանը, ինչպես նաև նոր, ոչ պետական լրատվության աղբյուրների ստեղծմանը աջակցեցին միջազգային կազմակերպությունները: Սակայն, այդ նպատակով ստեղծված ռադիոկայանը իր նոր մասնագիտական անձնակազմով ծայրահեղականների ձեռքին դարձավ գործիք, որի միջոցով վերջիններս սանձազերծեցին ցեղասպանություն: «Անկախ ՁԼՄ» եզրույթը երկիմաստ կիրառում չըպետք է ունենա: Դա այն ՁԼՄ-ն է, որը նպաստում է ժողովրդավարության զարգացմանը, և միաժամանակ՝ զերծ լինելով մենաշնորհից կամ օլիգարխիայից: Ընդամին, դրանից բխող այս երկու հատկանիշները՝ ժողովրդավարությանը նպաստելը և գաղափարների բազմակարծությունը չի կարելի նույնացնել:

ՁԼՄ ազատ և անկախ կացության չափը հազվադեպ կարող է սահմանվել օրենսդրությամբ կամ իշխանությունների միջոցով (հատկացումների տրամադրման ձևով): Սա բնութագրական է առանց բացառության բոլոր հասարակություններին: Այս առումով բարենպաստ իրավական միջավայրի ստեղծումը կախված է հասարակության արձագանքից: Այսպես, հետխորհրդային Ռուսաստանում, չնայած թերթերից օգտվելու ազատությանը, մամուլի ընթերցողների թիվը կտրուկ կրճատվեց: Եվ, չնայած այն հանգամանքին, որ դա տեղի ունեցավ տպագիր արտադրանքի գների աճման հետևանքով, նկատելի է սոցիալ-մշակութային գործոնը, որի իմաստը կայանում է նրանում, որ նմանատիպ պայմաններում «Էյֆորիայի» շրջանից հետո կտրուկ ընկնում է հետաքրքրությունը քաղաքական նորությունների նկատմամբ:

Պետք է ուշադրություն դարձնել նաև անցումային հասարակարգում հեռուստադիտողների վարքին: Հեռուստաընկերությունների տնօրենները արագորեն կողմնորոշվեցին, որ ցուցադրելով ամերիկյան կինոֆիլմեր (ձեռք բերված ինչպես օրինական, այնպես էլ ոչ օրինական ճանապարհով)՝ ավելի շուտ կգրավեն լսարանը, (մանավանդ մրցութային պայքարի պայմաններում), քան վավերագրական ծրագրերով կամ թատերական բեմականացումներով: Հեռուստալսարանի ընդլայնումը այս առումով չնպաստեց հասարակական երկխոսության խորացմանը: Մյուս կողմից, անկախ ՁԼՄ կայացման համար անհրաժեշտ է հաշվի առնել լսարանի նախասիրությունները և ունենալ ապահով և կայուն ցանց: Ավելի հեշտ է գործի դնել խոսքի ազատությունը սահմանափակող միջոցներ, քան այն միջոցները, որոնք նպաստում են լրատվության տարածմանը և օգտագործմանը: Իրավական հիմքը կարող է լինել արդյունավետ, սակայն ՁԼՄ ոլորտում օրենքները ինքնին չեն կարող ստեղծել քաղաքացիական հասարակարգ: Գոյություն ունեն մի շարք ամբողջատիրական հասարակարգեր, որոնք յուրացրել են հրապարակայնության ոճը: Չկա այնպիսի սխեմա, որ նախանշի, թե որ գործոններն են ավելի նպաստում ժողովրդավարական արժեքների ստեղծմանը: Ոչ քիչ դեպքերում, սակայն, մեծ նշանակություն կարող է ունենալ հատուկ կազմակերպությունների ստեղծումը, որոնք ճիշտ ժամանակին կարձագանքեն լրագրողների իրավունքների դեմ ոտնձգություններին: Որպես այդպիսիք կարելի է հիշատակել այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են «Հրապարակայնության պաշտպանության հանձնաժողովը», «Լրագրողների պաշտպանության հանձնաժողովը», «Լրագրողներն առանց սահմանների», որոնք սկիզբ են առել Արևմուտքի ժողովրդավարություններում:

ՁԼՄ ոլորտում իրավական բարեփոխումները և նմանատիպ այլ միջոցառումները պետք է գնահատել հատուկ եղանակներով: Հիմնականում դրանց պետք է վերաբերվել որպես գործողությունների, որոնք օգնում են ստեղծել և կայունացնել հասարակությունը: Պետք է հաշվի առնել այդ գործընթացում ՁԼՄ ներդրումը: Ուղղակիորեն վերցնել այլ պետությունների օրենքները և կիրառել որևէ համակարգում, անշուշտ, բավարար չէ: ՁԼՄ օրենքների քրեանրկման ընթացքում քաղաքացիները ձեռք են բերում «որոշակի ուսուցում, փորձ», որից հետո սկսում են վերլուծել ՁԼՄ դերը հասարակության ստեղծման և կայացման ընթացքում: Ընդ որում, աճում է խոսքի ազատության արժեքի գաղափարը և այդ ազատության ավելի ճիշտ ընկալումը, ինչպես նաև այն, թե ինչպես է կիրառվում խոսքի ազատությունը հասարակության մեջ: Հենց «բարենրպաստ միջավայր» հասկացությունից երևում է, թե որքանով են անհրաժեշտ ազատ, անկախ ՁԼՄ համար կոնկրետ իրավական ձևերը: Նկատի ունենք ՁԼՄ կառուցվածքի համար անհրաժեշտ նախապայմանները, ինչպես և այն, որ ժողովրդավարական կառույցների ստեղծման համար ՁԼՄ պետք է զարգանա իր սեփական կամ «հարազատ միջավայրում»: Այստեղ կարող ենք հանդիպել առարկությունների, որոնց հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երբ լրա-

տվական միջավայրը դառնում է զլոբալ, ազգային ՁԼՄ զարգացումը չի կարող համարվել ժողովրդավարական կառույցների կայացման անհրաժեշտ նախապայման: Համաձայն մյուս տեսակետի, էական պայման կհամարվի այն հանգամանքը, որ կառավարությունը բավարար չի տիրապետում լրատվության մենաշնորհին:

Միանշանակ նախապատվություն տալ արտահայտված տեսակետներից որևէ մեկին՝ կարծում ենք ճիշտ չէ, քանի որ ընդունելի են մասամբ թե մեկը, և թե մյուսը: Այս երկու հակադիր տեսակետները գնահատելու համար պետք է նախևառաջ վերլուծել ազգային և միջազգային իրավանորմների փոխգործողության և փոխհարաբերակցության խնդիրները՝ դրանց կոնտեքստում համադրելով ՁԼՄ գործունեությունը և իրավունքի գերակայության սկզբունքը: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունը պատկանում է մոնիստական համակարգին, որում ներպետական և միջազգային իրավական նորմերը գործում են զուգահեռաբար և կիրառվում որպես մեկ միասնական համակարգի բաղադրյալ տարրեր՝ փոխադրելով և լրացնելով մեկը մյուսին³: Ընդամին, շատ կարևոր է հաշվի առնել և ընդունել ազգային ավանդություններից բխող առանձնահատկությունները ՁԼՄ զարգացման բնագավառում, այնուհետև նպաստել այդ ավանդության նորմերի «ներթափանցմանը» միջազգային ոլորտ և դրանց փոխակերպվելը միջազգային նորմերի: Այսպիսով, ՁԼՄ-ի և իրավունքի գերակայության սկզբունքի փոխադրությունը պայմանավորված է ժողովրդավարական հասարակության առկայությամբ և այդ կառույցին համապատասխան զարգացման ընթացքով, ինչպես նաև իրավանորմների գործառնությամբ և ճիշտ կիրառումով:

НЕЗАВИСИМЫЕ СРЕДСТВА МАССОВОЙ ИНФОРМАЦИИ И ПРИНЦИП ПРИОРИТЕТА ПРАВА

ХАРАТЯН Л. А.

Резюме

В демократическом обществе вопрос о развитии СМИ характеризуется соотношением с правом. В настоящее время пресса стала необходимым элементом политической и социальной жизни, посредством которого право на свободу слова оказывает влияние на личность и общество в целом. Проблемы СМИ и демократических институтов рассматриваются с точки зрения соотношения права и прессы, принципа разделения властей, развития национального СМИ и роли прессы в демократическом обществе.

³ Տե՛ս Քոչարյան Վ., *Միջազգային իրավունք*, Ե., 2002, էջ 18: